

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ

2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ԶԱՐԳԱՅՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ԳՅՈՒՂ ՂԱՐԻՔՁԱՆՅԱՆ - 2012 ԹՎԱԿԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
- 1.1. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ
- 1.2. ՀԱՄԱՅՆՔԻ ԱՇԽԱՀՐԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՌԵԼԻԵՖԸ
- 1.3. ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ
- 1.4. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ
- 1.5. ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՄԱՅՈՂ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
- 1.6. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ
- 1.7. ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ
- 1.8. ԽՄԵԼՈՒ ԵՎ ՈՌՈԳՄԱՆ ՋՈՒՐ
- 1.9. ՏՐԱՆՍՊՈՐՏ ԵՎ ԿԱՊ
- 1.10. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
- 1.11. ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐ
- 1.12. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ
- 1.13. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ
- 1.14. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՄՇԱԿՈՒՅԹ, ՍՊՈՐՏ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ
- 1.15. ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ
- 1.16. ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ
- 1.17. ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
- 1.18. ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՅՈՂ ՎՏԱՆԳՆԵՐԸ
2. ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ
- 2.1. ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ
- 2.2. ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ
3. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ
- 3.1. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
- 3.2. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ
- 3.3. ՀԱՄԱՅՆՔԻ ՋԱՐԳԱՅՄԱՆ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱՔՐՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՎ ԼԱԽԱՏԵՍՎԱԾ ՆԵՐԿՐՈՒՄՆԵՐԻ

ՆԵՐԱՄՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Շիրակի մարզի Ղարիբջանյան համայնքի 2016-2020 թթ. զարգացման հնգամյա ծրագիրը (այսուհետ՝ ՀԶՀՄ) մշակելիս հաշվի է առնվել, որ համաձայն 2015 թվականի դեկտեմբերի 6-ին փոփոխված ՀՀ Սահմանադրության 181-րդ հոդվածի, ՏԻՄ-երը՝ համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, ընտրվում են հինգ տարի ժամկետով, և 210-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը պետք է համապատասխանեցվի Սահմանադրությանը և ուժի մեջ մտնի 2017 թվականի հունվարի 1-ից: Հաշվի առնելով այդ պահանջները՝ մշակվել է համայնքի զարգացման ոչ թե քառամյա, այլ հնգամյա ծրագիր:

ՀԶՀՄ-ն մշակվել է հիմքընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված տեղական ինքնակառավարման մարմինների իրավասություններն ու լիազորությունները նրանց գործունեության բնագավառներում (ոլորտներում), ՀԶՀՄ-ի մշակման և կառավարման վերաբերյալ համապատասխան հոդվածների դրույթները, ինչպես նաև՝ «Համայնքների ֆինանսիստների միավորում» հասարակական կազմակերպության կողմից մշակված և ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության կողմից 2014 թվականին հավանության արժանացած «Համայնքի զարգացման քառամյա ծրագրի մշակման և կառավարման մեթոդաբանության» և նույն կազմակերպության կողմից 2016 թվականին մշակված «Բազմաբնակավայր համայնքում «Համայնքի զարգացման քառամյա ծրագրի մշակման և կառավարման մեթոդաբանության» կիրառման» ուղեցույցի¹ մեթոդաբանական առանձնահատկությունները և ծրագրային հիմքերը:

Ներկայացվող ՀԶՀՄ-ն առաջիկա հինգ տարիների համար հանդիսանալու է Ղարիբջանյան համայնքի զարգացման հիմնական փաստաթղթերից մեկը: ՀԶՀՄ-ի բովանդակությունը պայմանավորված է ՀԶՀՄ-ի մշակմանը մասնակից համայնքի բնակավայրերի աշխատանքային խմբերի (այսուհետ՝ ԲԱԽ-երի) կողմից կատարված աշխատանքով և առաջարկներով, համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի ռեսուրսային (մարդկային, գույքային, ֆինանսատնտեսական, տեխնիկական և այլ) հնարավորություններով, համայնքային ծրագրերի իրականացման և ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների և ենթակառուցվածքների առկայությամբ: ՀԶՀՄ-ն մշակվել է մասնակցային եղանակով՝ հաշվի առնելով համայնքի շահագրգիռ բոլոր կողմերի առաջարկությունները: Հարցումների միջոցով վեր են հանվել համայնքի բնակիչներին հուզող խնդիրները, դրանք գնահատվել են բնակավայրային ժողովների ժամանակ ԲԱԽ-երի կողմից և դասակարգվել ըստ առաջնահերթության: Վերհանված հիմնախնդիրների հիման վրա, ելնելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջներից, համայնքի ղեկավարը՝ համայնքի աշխատակազմի և համայնքի ղեկավարին կից գործող տարեկան բյուջեի ու ՀԶՀՄ-ի մշակման խորհրդակցական մարմնի (ԽՄ) հետ միասին մշակել է համայնքի 2016-2020 թթ. ՀԶՀՄ-ն, որը քննարկվել և հաստատվել է համայնքի ավագանու կողմից և դրվել է գործողության մեջ:

ՀԶՀՄ-ի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդակցական մարմինը, փաստաթուղթը մշակելիս, հատուկ ուշադրություն է դարձրել և ձգտել, որպեսզի այն հնարավորինս համահունչ

¹ Ուղեցույցը մշակվել է ԳՄՀԸ-ի ֆինանսավորմամբ ՀՖՄ-ի կողմից իրականացվող ծրագրի շրջանակներում:

լինի գործողության մեջ դրված ՀՀ ռազմավարական, մարզային և տարածաշրջանային զարգացման ծրագրերին՝ ակնկալելով ՀՀ պետական կառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների հետ լիակատար փոխըմբռնում ՀԶՀՕ-ում ներկայացված խնդիրների առնչությամբ և արդյունավետ համագործակցություն դրանց լուծման գործում:

ՀԶՀՕ-ի 1-ին բաժնում ներկայացվում է համայնքի սոցիալ-տնտեսական ընդհանուր և ոլորտային փաստացի իրավիճակի և համայնքի կողմից մատուցվող ծառայությունների բնութագրումը և վերլուծությունը: Բաժնում ներառվել է նաև համայնք ՈԻԹՀՎ-վերլուծությունը՝ հիմնվելով համայնքի իրավիճակի վերլուծության ու գնահատման արդյունքների վրա և ձևակերպելով համայնքի ուժեղ և թույլ կողմերը, զարգացման ներքին ու արտաքին հիմնական հնարավորությունները, համայնքին սպառնացող հիմնական վտանգները:

ՀԶՀՕ-ի 2-րդ բաժնում սահմանվում են համայնքի երկարաժամկետ տեսականը, թե ինչպիսին ենք ցանկանում տեսնել մեր համայնքը ապագայում, ռազմավարությունը և ՀԶՀՕ-ի հիմնական նպատակները:

ՀԶՀՕ-ի 3-րդ բաժնում ներկայացվում են պետության և միջազգային դոնոր կազմակերպությունների հետ համայնքում գալիք հինգ տարիների ընթացքում նախատեսվող (շարունակվող) համագործակցության ուղղությունները:

ՀԶՀՕ-ի 4-րդ բաժնում ներկայացվում են համայնքի ֆինանսական վիճակի վերլուծությունը, գնահատումը և կանխատեսումը՝ ըստ համայնքի բյուջեի եկամտային ուղղությունների (սեփական եկամուտներ, պաշտոնական տրանսֆերտներ, փոխառու միջոցներ)՝ դիտարկելով նախորդ երկու և գալիք հինգ տարիների եկամտային ցուցանիշները:

ՀԶՀՕ-ի 5-րդ բաժնում ներկայացված են համայնքի զարգացման ծրագրերը: Դրանք գնահատվել են ըստ սահմանված չափորոշիչների և սահմանվել են առաջնահերթություններ: Ամփոփ ձևով ներկայացվել են առաջնահերթ այն ծրագրերը, որոնք մոտավոր հաշվարկներով ակնկալվում է, որ հնարավոր կլինի իրականացնել կանխատեսվող ֆինանսական միջոցներով: Գալիք հինգ տարիների ընթացքում իրականացման ենթակա ծրագրերը ձևակերպվել են օգտագործելով ծրագրերի կազմման օրինակելի ձևը, ինչպես նաև ներկայացնելով ծրագրերի ֆինանսավորման աղբյուրները (համայնքի բյուջե, ՀՀ պետական բյուջե, դոնոր կազմակերպություններ, այլ) և դրանց մոտավոր արժեքներն ըստ գալիք հինգ տարիների:

ՀԶՀՕ-ի 6-րդ բաժնում ներկայացվում է համայնքի սեփականություն համարվող շենքերի ու շինությունների, հողամասերի կառավարման (օտարման, վարձակալության տրամադրման) հնգամյա ծրագիրը:

ՀԶՀՕ-ի 7-րդ բաժնում ներկայացվում է ՀԶՀՕ-ի իրականացումը, մշտադիտարկումը (մոնիթորինգը) և գնահատումը, վերահսկումը և վերանայումը:

ՀԶՀՕ-ի եզրափակում բաժնում ներկայացվում են համառոտ մոտեցումներ ՀԶՀՕ-ի իրականացման, վերահսկման և գնահատման, ծրագրերի իրականացման արդյունքների քննարկման, ՀԶՀՕ-ում փոփոխություններին (կամ) լրացումների կատարման գործընթացների վերաբերյալ:

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄ, ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

1.1 ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Ղարիբջանյան գյուղը հիմնադրվել է 1873թվականին Ղարաքիլիսա անվամբ: Գյուղը գտնվում է Գյումրի քաղաքից 4կմ հեռավորության վրա, դեպի հարավ, Ախուրյան գետի ձախ ափին, ծովի մակերևույթից 1600մ բարձրության վրա: 1877թ. գյուղը վերանվանվում է Ալեքսանդրովկա: Ի պատիվ Նիկոլայ 3-րդ ցարի կնոջ, 1878թ. գյուղում կառուցվում է ռուսական եկեղեցի:

1926թվականի երկրաշարժից հետո գյուղը ամբողջովին վերակառուցվեց պետության կողմից:

1928թվականին գյուղում ստեղծվեց <<Կոմունա>> թաղամասը, որը բաղկացած է եղել 30 որբերից: Կոմունան հարատևեց մինչև 1935թվականը:

1930թվականին գյուղը կոլեկտիվացվեց, կառուցվեց Կոմունայի հանրակացարան և օժանդակ տնտեսության շենքեր:

1932թվականին վարկի միջոցով կառուցվեց առանձնատներ:

1933թվականին գյուղը վերանվանվում է Բագրատ Ղարիբջանյանի անունով:

Գյուղի բնակիչները զբաղվում են բանջարաբուծությամբ, հացահատիկային կուլտուրաների մշակությամբ և անասնապահությամբ:

1.2 ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ղարիբջանյան համայնքի բնակիչները ավանդապաշտ և ավանդապահ են՝ միաժամանակ անտարբեր չլինելով նորի նկատմամբ: Պատմության մեջ կան փաստեր, որոնք վկայում են Ղարիբջանյանի բնակչության ըմբոստ բնավորության մասին: Ավանդաբար պահպանվել են նվիրվածությունը և հարգանքը ընտանիքի նկատմամբ, հարգանքն աշխատանքի և աշխատող մարդու նկատմամբ: Խոհանոցում պահպանվել են ավանդական ճաշատեսակներ, որոնցով շարունակում են պատվել և զարմացնել հյուրերին:

Ղարիբջանյան համայնքի բնակչությունը 2016թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում է 1133 մարդ (աղյուսակ 1):

Աղյուսակ 1.

Համայնքի կազմի մեջ մտնող բնակավայրերի բնակչության նուստնային տնտեսությունների ցուցանիշները (01.01.2016 թ. դրությամբ)

Հ/հ	Բնակավայրի անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը	Մշտական տնային տնտեսությունների թվաքանակը	Առկա տնային տնտեսությունների թվաքանակը
1.	Ղարիբջանյան	1005 մարդ	264 տ/տ.	276 տ/տ.

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ (մարդ)
(Տվյալները լրացված են 2013 թ. հունվարի 1-ի դրությամբ)

- Ընդամենը՝ մշտական բնակչություն - 1056,
Այդ թվում՝ տղամարդ - 529, կին՝ - 527,
- Տնային տնտեսությունների թվաքանակը - 296,
- Առկա բնակչություն - 1134,
- Առկա տնային տնտեսությունների քանակը - 220,

Բնակչության բաշխվածությունն ըստ ազգային պատկանելության (առկա բնակչություն)

- Հայ - 1132,
- Ռուս - 2,

Բնակչության բաշխումն ըստ տարիքային խմբերի (առկա բնակչություն)

Նախադպրոցական տարիքի երեխաներ / 0 - 6 տարեկան / - 101,

- որից՝ մինչև 1 տարեկան - 15,
1-2 տարեկան - 28,
3-4 տարեկան - 23,
5-6 տարեկան - 35:
- Դպրոցական տարիքի երեխաներ / 7 - 17 տարեկան / - 137,
որից՝ 7-10 տարեկան - 53,
11-14 տարեկան - 38,
15-17 տարեկան - 46:
- Հասուն տարիքի բնակչություն / 18-64 / - 799,
որից՝ 18-22 տարեկան - 64,
23-45 տարեկան - 424,

46-64 տարեկան – 311:

- Տարեց բնակչություն / 65 և ավելի / - 97:
- Համայնքի ընտրողների թիվը - 712:

Մնունդ, մահ, ամուսնություն, ամուսնալուծություն (վերջին 3 տարիների միջին ցուցանիշ)

- Մնունդ - 15,
Որից կենդանի ծնունդ – 15,
- Մահ – 3,
- Ամուսնություն – 12,
- Ամուսնալուծություն – 2:

Համայնքի սոցիալական խմբերի ներկայացվածությունը

- Հաշմանդամներ – 37,
այդ թվում կանայք՝ 12,
որից՝ հաշմանդամ երեխա – 2,
- Միակողմանի ծնողազուրկ երեխա – 2,
- Ամուսնալուծված անձի երեխա – 6,
- Կենսաթոշակառուներ – 104,
- Միայնակ չաշխատող կենսաթոշակառուներ – 12,
- Տարեց կենսաթոշակառուներ /75 տարեկան և բարձր/ - 35,

Համայնքի տնային տնտեսությունների սոցիալական խմբերի ներկայացվածությունը

- Երեք և ավելի երեխաներ ունեցող /0-16 տարեկան/ – 31,
- Միայն կենսաթոշակառուներից կազմված /65 և ավելի տարեկան/ - 2,
- Հաշմանդամ երեխա ունեցող – 2,
- Մինչև 6 տարեկան երեխա ունեցող – 58
- Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների քանակը՝ 28

ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ

Համայնքի բնակչության բաշխումն ըստ գրադվածության հիմնական ճյուղերի (մարդ)

- Գյուղատնտեսական ինքնագրադվածություն – 390
- Վարձու աշխատանք գյուղատնտեսական ոլորտում – 35,

- Վարձու աշխատանք ոչ գյուղատնտեսական ոլորտում, մասնավոր – 34,
- Վարձու աշխատանք պետական ոլորտում – 38,
- Ոչ գյուղատնտեսական ինքնագրավածություն – 1,
- Աշակետներ /16 տարեկան և բարձր/ - 98,
- Ուսանողներ – 23,
- Բանակում ծառայողներ – 19,
որից պայմանագրային՝ 9,
պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվող՝ 10,
- Չունեն գրավածություն /տնտեսապես ոչ ակտիվ/ – 234,

Համայնքում գրավածների բաշխվածությունն ըստ ոլորտների

- Գյուղատնտեսություն – 511,
- Հանրագործական արդյունաբերություն – 0,
- Էլեկտրոէներգիայի, գազի ջրամատակարարման ոլորտի սպասարկում – 7,
- Շինարարություն – 5,
- Առևտուր և այլ սպասարկումներ – 1,
- Գյուղատնտեսական ծառայություններ – 35,
- Տրանսպորտ և կապ – 1,
- Տեղական ինքնակառավարում – 10,
- Կրթություն – 27,
- Առողջապահություն և սոցիալական ծառայություններ – 1,
- Կոմունալ, անհատական ծառայությունների մատուցում – 0,
- Ոսանողներ, ավարտական դասարանների աշակերտներ, բանակում ծառայողներ – 80:

Միգրացիա /2012 թվականի ընթացքում/

- Այլ բնակավայր տեղափոխված ընտանիքների թիվը – 1,
որից՝ Հայաստանում այլ բնակավայր՝ 1:
- Արտերկիր՝ 0:
- Մշտական բնակության համար համայնք տեղափոխված ընտանիքների թիվը՝ 0,
որից Հայաստանի այլ բնակավայրերից՝ 0:
- Արտագնա աշխատանքի մեկնողների թիվ – 62 (60 տնային տնտեսություններից):

Համայնքի հասուն տարիքի բնակչության բաշխումն ըստ կրթամակարդակի

- Տարրական – 50,
- հիմնական – 140,
- միջնակարգ -577,
- միջնակարգ մասնագիտական – 113,
- բարձրագույն - 47:

1.4.ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Ճողովրդի իշխանությունն իրականացնելու և համայնքային խնդիրները լուծելու նպատակով համայնքում օրենքով սահմանված կարգով ընտրված են համայնքի ավագանի /ավագանու 5 անդամ/ և համայնքի ղեկավար: 2012 թ. Սեպտեմբերի 9-ին համայնքում կայացած համայնքի ղեկավարի ընտրությունների արդյունքներով համայնքի ղեկավար վերընտրվել Մանվել Պողոսյանը:

<<Տեղական ինքնակառավարման մասին>> և <<Համայնքային ծառայության մասին> Հայաստանի Հանրապետության օրենքների համաձայն ձևավորվել է համայնքի ղեկավար աշխատակազմ հետևյալ կառուցվածքով՝

Հայեղողական պաշտոն

Համայնքի ղեկավարի տեղակալ:

Համայնքային ծառայության պաշտոններ՝

1. Գյուղապետարանի աշխատակազմի բարտուղար – 1 միավոր,
2. Գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ – 1 միավոր,
3. Գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահ – միավոր:

Տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմ

1. Համակարգչի օպերատոր – 1 միավոր,
2. Գրադարանավար – 1 միավոր,
3. Հավաքարար - 1 միավոր,
4. Ծառայողական ավտոմեքենայի վարորդ – 1 միավոր:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿԱԶՄԸ